ՆԱՐԵԿ ՎՐԴ. ՇԱՔԱՐՅԱՆ
(Վանահայր ս. Գեղարդա վանքի)

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾ ՊԱՀՔԻ ՇՐՋԱՆԻՆ

Մեծ պահք է:

Եկեղեցին ապաշխարության օրերի մեջն է:

Մեծ պահքը այն շրջանն է, երբ հավատացյալն ամբողջապես հետամտությունն ունի իր հոգևոր, ներհայեցողական ճշմարիտ կյանքի: **«Պահքը** իր ծոմի և կամ անյուղ ու **անժուր ուտելիքի,** և նույնիսկ իր լոկ **աղուհացի** իմաստով, կերակուրի արտաքին խնդիր մը չէ: Այս մասին շատ որոշ և շատ բացարձակ է Ավետարանի սկզբունքը. «Իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճեսցէ» (Հռոմ. ԺԴ 5), (Բաբգեն կաթողիկոս, «Դասեր Ավետարանեն», էջ 15):

Պահքի կամ պահեցողության սկզբունքը շատ հին է: Հին Ուխտում Մովսես մարգարեն պահեցողությամբ 40 օր շարունակ պատրաստվեց իր գործունեությանը: Սակայն, ըստ ս. Ներսես Շնորհալու, պահքի օրենքը հաստատվել է Աստուծո կողմից, արարչագործության ժամանակ, առաջին մարդու՝ Ադամի ստեղծումից անմիջապես հետո. **«Որ զօրէնս սրբութեան պահոց՝ նախ ի դրախտին աւանդեցեր»** (շարական): Նախահայրերը՝ Ադամն ու Եվան, «ոչ **պահելով** նախաստեղծիցն ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին զդառնութիւն մեղաց և մահու»:

Թե՛ Հիսուս Քրիստոս և թե՛ Հովհաննես Մկրտիչ ևս, իրենց մեծ առաքելություններից առաջ միշտ պահեցողության մի կարեվոր շրջան են ունեցել և նոր միայն զորացած հոգով գալիքը հաղթահարել:

Պահքի օրենքը կամ կանոնը պաշտոնապես հաստատել են առաքյալները ժողովներում: «Կանոնք առաքելականք»-ի Ը գլխում կարդում ենք. «Կարգեցին առաքեալքն և եդին հաստատութեամբ, թե զԽ (քառասուն) աւր պահս կարգեսցեն յամենայն չարութենէ, ի մեղաց և ի կերակրոյ, յառաջ քան զաւրն չարչարանաց Փրկչին մերոյ. և ապա... տաւն յարութեան Փրկչին»: Պարզ է, խոսքը Մեծ պահքի մասին է, քառասուն օր նախքան ս. Զատիկը:

Կրոնաբարոյական գեղեցիկ բացատրություն է տալիս նաև պահքի կարևորության և նրա նշանակության մասին ս. Գրիգոր Լուսավորիչն իր «Յաճախապատում ճառք»-ի Թ գլխում. պահքը, ասված է այն-

տեղ, «դաստիարակ են մարդկան, խափանիչ անձուժկալութեան ամենայն վնասուց... կատարեալ հաւատոյ ճշմարտութեան ազդեցութիւն. յոյսն առողջութեան, առիթ սրբութեան: Պահքը աղ են, որ անուշացնեն զնեխութիւն հոգւոյ և մարմնոյ, աղտեղութիւն մեղաց»: Ուրեմն պահքը այն շրջանն է, երբ այս քառասուն օրերին ճշմարիտ քրիստոնյան հետևելու է իր անձին, անվանը և կոչումին, կարողանալու համար աստվածահաճո, մեղքից հեռու, անսայթաք կյանքով ապրելու՝ հասնելու դեպի կատարելության և Աստված իր ձգտումի ճանապարհին: Դարձյալ, պահքը այն շրջանն է, երբ կյանքիդ այսօրվա հայելու մեջ վճիտ կերպով պիտի պարզ դառնա վաղվա կյանքիդ պատկերը՝ բոլոր տեսակի փորձություններին ու գայթակղություններին հաղթելու, խոնարհության, հավատքի, լավատեսության, անձիդ վրա հսկելու ճանապարհով:

Ս. եկեղեցին և եռամեծ հայրապետները հաստատելով շաբաթապահքը կամ մանավանդ քառասնորդական այս պահքը, նպատակ են ունեցել իրենց կրոնաբարոյական թելադրություններով հետամուտ լինելու և ճանաչել տալու հավատացյալներին մեղքի ու չարի, գեղեցիկի ու տգեղի, օրինականի ու ոչ օրինականի հարցերը՝ լուսավոր, օգտակար և աստվածահաճո կյանքին ի խընդիր: Ահա թե ինչու այս իմաստով շատ դաստիարակչական են, շինիչ՝ հոգևոր իմաստով, ապաշխարության այս օրերի ամենօրյա շարականները՝ գրված ս. Մեսրոպ Մաշտոցի և կիրակի օրերի ավագ օրհնությունները՝ ս. Ներսես Շնորհալի հայրապետի կողմից: Դրանցում, ապաշխարության ամենօրյա շարականներում, ահա օրինակ, ներկայացվում են մեղքի մեջ ընկղմված և տվայտող մարդու հոգու ալեկոծումները.

«Ծով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ,
Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ,
Նաւապետ՝ բարի, լեր անձին իմոյ ապաւէն»:

Իր մեղավորությունը գիտակցող մարդը, սակայն, զգում է, որ ինքը «ճշմարտութեան գիտութիւնը» կորցրել է ու հիմա այսպես հարվածված այդ մեղքից դարձել է հիվանդ ու մոլորված. այժմ մնում է միայն այն, որ նա զղջա իր սխալը «բազումողորմ Փրկչի» մոտ և Նրան խնդրի, որ ներվեն իր մեղքերը. «Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց»: Ահա այս է մեղավորի գիտակից խոսքը, որին և հաջորդում է իսկույն խոստովանությունը:

«Զղջման իմոյ զարտասուս արկանեմ առաջի քո Քրիստոս.
Թող ինձ զմեղս իմ և ողորմեա»:

Ահա այսպես է, որ ապաշխարողի հոգին սրբվում է մեղքից. նա ոտքի է կանգնում իր մեղքի բեռան ծանրությունից թեթևացած:

Ապաշխարության խորհրդի ընթացման հարցում մեծ կարևորություն ունեն մանավանդ Մեծ պահքի վեց կիրակիները՝ իրենց համապատասխան շարականներով և սուրբ գրական ընթերցումներով: Այդ կիրակիները կոչվում են «Բուն բարեկենդանի», «Արտաքսման», «Անառակի», «Տնտեսի», «Դատավորի» և «Գալստյան»:

Մեծ պահքի առաջին՝ «Բուն բարեկենդանի» կիրակին նվիրված է արարչագործության հիշատակին: Միշտ է, որ շաբաթ երեկոյան վարագույրով փակվում են եկեղեցու ս. խորանները, սակայն ապաշխարության օրերի մեջ մտնող մարդու համար դեռ ուրախության և տոնական մի օր է: Այդ օրվա շարականից մի անգամ ևս պարզ է դառնում այն, որ արարչագործությունը կատարված է Աստուծո կողմից վեց օրում և որպես նրա թագն ու պսակն էլ, վերջին օրում, ստեղծված է Արարչի՝ Աստուծո սիրելին՝ առաջին մարդը՝ Ադամը: Արարչագործության նախորդ հինգ օրերում բանականությամբ օժտված ստեղծագործություններ չկան: Միայն մարդուն է շնորհված, Աստուծո ընկերակցության համար, բանականություն, ազատ կամք և անձնիշխանություն: Ն'արդը «հող յերկրէ» է, սակայն նա միայն նյութ կամ ֆիզիկական գո չէ, այլ ունի նաև շունչ կենդանի՝ հոգի, և ապրում է նյութի ու հոգու սահմանների հաղորդակցման կամ շփման կենտրոնում: Սակայն Աստուծո պատկերով ստեղծված մարդը շատ հաճախ չի կարողանում պահել իր բարձրագույն կոչումն ու պատիվը, դառնում է օրինազանց, կորցնում իր «սկզբնական արդարութիւնը», մեղանչում է: Մեղքին հաջորդում է պատիժը: Նա արտաքսվում է դրախտից, եղծում «աստվածային» պատկերը: Իրոք, «Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ. հաւասարեաց անբանից և նմանեաց նոցա»:

Հուրախություն և ի մխիթարություն մարդուն, դրախտից վտարված մարդը, սակայն, Աստծուց չի մոռացվում: Այստեղ էլ նա իր կամքն ու անձնիշխանությունը պահած լինելով եթե ցանկանա, Աստված կհասնի նրան, կփրկի, որով և կերաշխավորվի հավիտենականի հույսն ու Աստուծո հետ ունենալիք գործակցությունը: Սակայն այս բանի համար, իհարկե, պետք է ունենալ կամք, հավատք և հույս: Քրիստոսի մարդեղության հիմնական նպատակը մարդու փրկությունն է և նրա վերադարձը դրախ-

տային անմեղության և արդարության: Անառակ, բայց որդի: Աստված «ոչ կամի զմահ մեղաւորի, այլ զդառնալն նորա և զկեալն»:

Մեծ պահքի երկրորդ և երրորդ կիրակիներն իրենց շարականներով, ս. ավետարանական ընթերցումներով և այլաբանական պատումներով շատ ուսանելի են և համոզիչ: Մարդը վտարված է դրախտից, որովհետև բացահայտված է անհնազանդությունը, օրինազանցությունը և սխալ կերպով գործադրված կամքի ազատությունը: Սակայն, ըստ աստվածադիր մի այլ օրենքի, եթե օրինազանցության համար տրվում է համապատասխան պատիժը, ապա ուրեմն մեղքի և անառակ կյանքի համար զղջումի դեպքում էլ՝ կտրվի փրկությունը: Բավական է, որ Անառակը, այսինքն մեղավոր մարդկությունը, որի ավետարանական գեղեցիկ պատմությունը բոլորին հայտնի է, գիտակցի իր մեղքը և զղջա, ընդունի իր պատասխանատվությունը իր անկման մեջ և վճռական որոշումով զարթնի նրա խավարած հոգին. «Հայր, մեղա յերկինս և առաջի քո», ինչպես առակումն ընտանիքի հայրն է, Աստված կների նրան:

Ահա այս անկյունադարձային տեղում է, որ մարդն իր ազատ կամքով պետք է ողբսեվորի իրեն որպես մարդ՝ իր կատարելության ձգտումով, թե՞ մարդ՝ իր մեղանչականությամբ ու էլ ավելի կործանումով, որպես մարդ և Աստուծո պատկեր մեղքից հեռու, թե՞ որպես մարդ չարի և մահվան գերի՝ իր կործանումով: Այո, «դուք եք տաճար Աստուծոյ կենդանւոյ» Հիսուսի կարևոր խոսքերը չպետք է մոռանալ, եթե ոչ «մեղքի վարձքը մահն է» կվճռի նա և մարդու կորուստը կդառնա անխուսափելի: Ուրեմն թույլ չպետք է տալ, որ մեղավորը իր իսկ ձեռքով իր կորուստը պատրաստի: Եթե նա, առաջին մարդը, դրախտում, որ Աստուծո տնտեսությունն է, չկարողացավ որպես մի տնտես իրեն լավ դրսևորել, գոնե այստեղ՝ երկրի վրա և մարդկային հարաբերություններում պետք է իմաստուն լինի, որով և պատրաստ՝ մաքուր հաշիվ տալու իր բոլոր գործերի համար: Եվ ահա Մեծ պահքի չորրորդ կիրակին էլ այդ դասն է հուշում:

«Անիրավ տնտեսի» առակով, Ավետարանում և օրվա շարականից պարզ է դառնում, «որ տիրապես մեծատունդ՝ ստեղծեր երկրորդ աշխարհ զգալի. և ի դրախտն յադենի՝ տնտես եղեալ զմարդն առաջին» (շարական): Այստեղ մարդը, որպես Աստուծո պաշտոնյա, հաշվետու և պատասխանատու անձ է «մեծատան» կամ այս կալվածքի Տիրոջ՝ Աստուծո առջև, բացատրում է իր շարականով Ներսես Շնորհալին: Ու եթե պատահի, որ մի օր «Մեծատունը» ասի. «Տո՛ւր զհամար տնտեսութեան քո», ինչպես այդ հաշիվը պահանջել էր դրախտում («Ադամ, ո՞ւր ես»), այդ տնտեսը ճակատաբաց պետք է կարողանա պահանջվող հաշիվները տալ, որով և արժանանալու «Տիրոջ» գովասանքին: Այլապես «զի՞նչ օգուտ է մարդոյ, եթէ աշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցի»: Նյութը մարդուն չպետք է իր գերին դարձնի և նրան տանի դեպի օրինազանցություն ու մեղանչում: Այո՛, կամք և անձնիշխանություն իրենց իրավունքի մեջն են, բայց չէ՞ որ օրենքը ու արդարությունն էլ կպահանջեն, որ մեղավորը պատժվի:

Մեծ պահքի հինգերորդ կիրակին աղոթքի խորհրդին է նվիրված: Աղոթքի կարևորության մասին ևս այդպես լուրջ և իմաստուն կերպով խոսում է ս. Ներսես Շնորհալին իր օրվա շարականում:

Աղոթքը ապաշխարող հոգու ցնծությունն է, ճշմարիտ արտահայտությունը, որով հոգին դառնում է ավելի գեղեցիկ, ազնիվ ու լուսավոր: Աղոթքը այն ուժն է, որը քեզ մղում է ճշմարիտ զրույցի Աստուծո հետ: Այն մի կամուրջ է նետված այստեղից երկինք, որով մեր խնդրանքները հասնում են առ Աստված և միաժամանակ վերադառնում և բերում են Աստուծո շնորհներն ու օրհնությունները: Աղոթքը աղոթք է, եթե այն մաքուր սրտից է բխում, եթե այն հարատև է ու հետևողական: Ս. Ներսես Շնորհալու գրչին պատկանող այդ օրվա շարականում ասված է. «Շնորհեա մեզ յամենայն ժամ լինել քեզ յանդիման մաքուր աղօթիւք»: Օրվա ս. Ավետարանն էլ պահանջում է նույնը. «Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի ձանձրանալ»: Եվ շարականի պատումն էլ պտտվում է նույն Ավետարանի շուրջ՝ օրվա խորհրդի մեկնությամբ հանդերձ:

Տեղին է անդրադառնալ նաև այն բանին, որ աղոթքը մաքուր է, երբ այն կատարվում է ըստ Աստուծո կամքի, «Եղիցին կամք քո», և ոչ թե մերը՝ տկար ու եսական, վրեժխնդիր կամ կրքով, չար պահանջներով լեցուն: Աղոթքի մեջ կամքը պարտադրել՝ պիտի նշանակեր Աստուծո առաջ պայմաններ դնել և չվստահել Նրա հավասարաբաշխ սիրուն և անաչառությանը:

Ապաշխարության այս օրերով ձեռք բերված երջանկությունից ու մխիթարությունից ավելի լավ բան դժվար թե լինի ապաշխարող հոգու և կատարելության ձգտող մարդու համար: Այդպիսի քրիստոնյա մարդու համար ապաշխարությամբ եղած հոգու սըր-

բացումն ու մաքրությունը իր կարևորությունն է ստանում այն պայմանով, որ իրոք խաչվող և հարություն առնող Քրիստոսի կյանքի խորհրդով ավելի է վավերացվում այն, թե իրոք Դրանով՝

«Տրվում է՝ մեր մեղքերին դարձ,
Պարտքերին՝ շնորհում, եղծումներին՝ նորոգություն,
Քավություն անօրենության, բուժումն վերքերի,
Անդորրություն տագնապի, ներումն պատժի,
Հանդարտումն պատերազմի, անձրև՝ կրակի վրա,
Պատուհասի փոխարեն՝ պարգև,
Եվ սատակման տեղակ՝ շնորհի արժանացում
Եվ կյանքի ազատություն՝ մահվան գործիքի փոխարեն»:
(Նարեկացի, ԼԳ)

Եվ ահա այս երջանկությամբ մարդը սիրով և համբերությամբ դիմավորում է Մեծ պահքի վեցերորդ կիրակին, որը, ինչպես գիտենք, նվիրված է Փրկչի գալստյանը:

Ապաշխարողը հինգ կիրակիներն իր ետեվում թողած, եթե օրինազանց էր ու արտաքսված, անառակ էր ու հոռետես, իր սխալը զգացած ու դարձի եկած, հարատև աղոթքով և պատվիրանապահությամբ հասած մինչև այսօրը սպասումի մեջն է, թե Քրիստոսի գալուստը, որը լինելու է անպայման, իր համար էլ է՞: Եվ եթե Նա գա, ինքն էլ անշուշտ կարժանանա գնալու այնտեղ, ուր է Աստուծո թագավորությունը: Քրիստոսի, որպես երկրորդ Ադամի, առանց այս գալստյան՝ փրկագործության խորհուրդի ամեն ինչ կմնար կիսատ, և մարդու կյանքը կդառնար անիմաստ: Բայց լավ է, որ այդ հույսի մասին «բազմապատիկ օրինակօք» հառաջագույն գուշակված էր, և մարդը սիրով սպասում էր այդ խորհուրդին, գրում է այդ մասին մի այլ շարականում Ներսես Շնորհալին. «Քո անպատում խոնարհութեամբդ և կամաւոր խաչելութեամբ՝ հաշտեաց ընդ մեզ, Տէ՛ր, գթութեամբ և թող զմեղս ողորմութեամբ»:

Մեղավոր մարդը հուսացող մարդ է, որ հավատում է, թե ապաշխարությամբ և խորհրդածություններով կդիմավորի Փրկչի գալուստը, քանի որ նա հաստատ համոզված է Քրիստոսով պայմանավորված իր փրկությանը և իր հոգու հավասարակշռությանը, որոնցով և կարժանանա Աստուծո երանավետ տեսությանը:

Եվ միշտ էլ, քանի ուշ չէ, թող ուրեմն սպասենք «ցաւագին հեծութեամբ և պահօք պնդութեամբ, բազում զղջմամբ և ապաշաւօք զսխալանսն սգալ հանապազ, որ վրիպեցան յերանելի յուսոյն և ի յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ» (Յաճախպ., ԺԲ) դիմավորելու համար թե՛ Քրիստոսի ս. գալուստը, թե՛ նրան հաջորդելիք ս. Հարության առավոտը:

Աստուծո կամքը արդար է և Նրա բարի աչքը մեր վրա: Մենք Իր արարածները թող վերանորոգված կյանքով ու մեր արի ու բարի հավատքով ու գործերով աղոթենք ասելով. ով Տեր, «յուսալով յողորմութիւն քո... բաց մեզ զդուռն ողորմութեան քո, և սրբեա զմեզ ի գաղտնեաց մեղաց մերոց» (Հ. Ոսկեբերան):